# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՄՀ

Վիճակագրված 1922

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
2026 թ.
№ 15 (1170)

*Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին*
*Երկշաբաթաթերթ ● հրատարակման 61-րդ տարի*

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ


## *Սիրելի՛ ուսուցիչներ, մանկավարժներ, կրթության ոլորտի նվիրյալներ*

Շնորհավորում եմ մասնագիտական տոնի՝ Ուսուցչի օրվա առթիվ: Ուսուցչի առաքելությունը երբեք չի սահմանափակվել միայն գիտելիք փոխանցելով: Ուսուցիչը ձևավորում է մտածողություն, արժեհամակարգ և քաղաքացիական պատասխանատվություն, օգնում է սովորողին բացահայտել սեփական հնարավորությունները, հավատալ իր ուժերին և գտնել իր տեղը հասարակության մեջ: Յուրաքանչյուր սերնդի կրթության և դաստիարակության միջոցով ուսուցիչը մասնակցում է երկրի ապագայի ձևավորմանը:

Այսօր, երբ կրթական համակարգը կանգնած է նոր մարտահրավերների և վերափոխումների առջև, առավել քան երբևէ կարևորվում են ուսուցչի մասնագիտական կարողությունները, ստեղծագործական մտածողությունը, շարունակական զարգացման պատրաստակամությունն ու մարդկային արժեքների նկատմամբ նվիրվածությունը:

Այսօր ուսուցչի առաքելությունը ոչ միայն չի նվազում, այլև դառնում է առավել կարևոր ու պատասխանատու: Յուրաքանչյուրիս կյանքում կա ուսուցիչ, որի խոսքը, վերաբերմունքը կամ տված գիտելիքը դարձել է կարևոր հենարան և շարունակել է ուղեկցել մեզ կյանքի տարբեր փուլերում: Այդ ազդեցությունն է, որ ուսուցչի աշխատանքը դարձնում է երկարաժամկետ և խորքային:



Հայկական պետական մանկավարժական համալսարանի համար ուսուցչի մասնագիտական ու մարդկային կերպարի ձևավորումը ոչ միայն կրթական, այլև ազգային նշանակության առաքելություն է: Մենք խորապես գիտակցում ենք մեր պատասխանատվությունը՝ պատրաստելու այնպիսի մանկավարժների, որոնք կկարողանան կրթել ազատ մտածող, արժանապատիվ, պատասխանատու և մրցունակ սերունդ:

Բուհը մեկ դարից ավելի առանձնահատուկ դեր ունի Հայաստանի կրթական համակարգի զարգացման գործում՝ լինելով ուսուցչի և մանկավարժական կադրերի պատրաստման, մանկավարժական մտքի, կրթական հետազոտությունների և նորարարությունների կարևոր կենտրոն: Համալսարանի առաքելությունը միայն ապագա ուսուցիչների մասնագիտական պատրաստումը չէ. այն նաև կրթության զարգացման օրակարգի ձևավորումը, մանկավարժական արժեքների և մասնագիտական մշակույթի փոխանցումը, կրթության որակի շարունակական բարելավմանն ու ժամանակակից դպրոցի զարգացմանը նպաստելը: Միևնույն ժամանակ, անփոփոխ է մնում կրթության կարևորագույն առաքելություններից մեկը՝ ձևավորել գիտակից, արժեհամակարգ ունեցող և իր երկրի ու հասարակության նկատմամբ պատասխանատվություն կրող քաղաքացիներ: Այս տոնական օրը երախտագիտությամբ ենք արժևորում բոլոր այն ուսուցիչների աշխատանքը, որոնք ամեն օր իրենց գիտելիքով, նվիրումով և օրինակով փոխում են երեխաների ու երիտասարդների կյանքը: Ձեր աշխատանքը հաճախ չի ունենում ակնթարթային արդյունք, սակայն դրա ազդեցությունը կարող է ուղեկցել մարդուն ամբողջ կյանքի ընթացքում:

Մաղթում եմ ձեզ մասնագիտական ձեռքբերումներ, ստեղծագործական ուժ և ձեր աշխատանքի արժանի գնահատանք: Թող ձեր յուրաքանչյուր աշակերտի հաջողությունը դառնա ձեր աշխատանքի ամենամեծ գնահատականը, իսկ ձեր թողած հետքը՝ նրանց կյանքի լուսավոր և կարևոր հիշողություններից մեկը:

Շնորհավոր Ուսուցչի օրը:

**Լիլիթ Մկրտչյան**
**Հայկական պետական**
**մանկավարժական համալսարանի**
**ռեկտորի պաշտոնակատար**

## Ուսուցիչն է, որ կապել է ժամանակներն իրար

Մանկավարժական համալսարանի առաջին կուրսի ուսանողների երդման արարողությունը ավանդական է դարձել նշել Ուսուցչի տոնին: Օր, որն ինչպես նշեց ՀՊՄՀ շրջանավարտ Արուս Այվազյանը՝ «ևս մեկ անգամ վկայում է, որ կրթությունն է ամենամեծ հենասյունը մասնագիտական, անձնական և հասարակական հաջողությունների գործում»: Շրջանավարտն ու օրվա հանդիսավարը նշեց, որ մանկավարժ կրթող բուհը տալիս է որակյալ կրթություն և ձևավորում ամուր արժեքներ, որոնք ոգեշնչում են ուսանողին ուսման մեջ և կյանքում նպատակասլաց լինելու և կրթության հզոր ուժը մատաղ սերնդի մեջ սերմանելու ճանապարհին: Նա միաժամանակ ընդգծեց, որ ուսանողները ընտրել են ոչ թե պարզապես մասնագիտություն, այլ առաքելություն:



ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը շնորհավորեց բոլորին և դիմելով առաջին կուրսեցիներին՝ ընդգծեց, որ նրանք արդեն դարձել են համալսարանի 104-ամյա պատմության էներգիայի կրողները, հասցրել են սիրել իրենց մասնագիտությունը, զգալ համալսարանը և ավանդույթի մաս կազմել: Նա շնորհակալություն հայտնեց դասախոսներին՝ ուսուցչի պատիվը բարձր պահելու, համալսարանի փորձն ու ավանդույթները ուսանողներին փոխանցելու համար:

Լիլիթ Մկրտչյանն իր երախտագիտությունը հայտնեց բոլոր ուսուցիչներին, որոնք կերտել են սերունդներ, և բուհի պրոֆեսորադասախոսական կազմին՝ իրենց նվիրումի համար:

«Դուք այսօր արդեն մանկավարժական մեծ ընտանիքի մասն եք կազմում, պարտավորություն եք վերցրել սովորելու, կրթվելու և դառնալու այն մարդը, որի արժեքների կրողն է Մանկավարժական համալսարանը»,-առաջին կուրսեցիներին դիմեց Լիլիթ Մկրտչյանը՝ մաղթելով լինել հետաքրքրված, ստեղծագործ, պատասխանատու և պատվով կրել մասնագիտությունն ու կոչումը:

Շնորհավորանքի խոսք ասաց ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը: «Բոլոր ժամանակներում դպրության լույսը սիրո և ակնածանքի



առարկա է եղել, սիրո և ակնածանքի առարկա է եղել և ուսուցիչը: Նրան վստահել են և հավատացել: Այդ ուսուցիչն է եղել, որ կապել է ժամանակներն իրար և այսօրվա էստաֆետը հանձնել գալիքին»,-ասաց պրոֆեսորը՝ ընդգծելով, որ այսօր կրկնակի տոն է համալսարանում: Նա նշեց, որ աշխահում երկու մասնագիտություններ կան, որոնց ներկայացուցիչները երդվում են՝ բժիշկները և ուսուցիչները: Ապագա մանկավարժներն այսօր երդվում են անմնացորդ նվիրվել մանկավարժությանը, սիրել երեխային, գիտելիքների ծով կուտակել և դրանք փոխանցել մատաղ սերնդին:

«Ուսուցիչը ամենակարևոր մարդն է, ում ձեռքերում թրծվում, կրթվում է այսօրվա սերունդը, որն ապագայի քաղաքացին է»,-ասաց ՀՊՄՀ շրջանավարտ, Մանկավարժության ամբիոնի դասախոս, Երևանի Վարդան Արևելցու անվան №104 դպրոցի տնօրեն Նաիրա Մարտիրոսյանը: Մանկավարժի մասնագիտության մեջ խորանալու ճանապարհին նա հասկացել է, որ պետք է սիրել երեխային և անընդհատ զարգանալ:

«Ուսուցչի մասնագիտությունը կոչում է, և մենք պետք է այդ կոչմանը հավատարիմ մնանք,-ասաց Նաիրա Մարտիրոսյանը:-Ուսուցչի խոսքը երեխաներին ուժ է տալիս, վերաբերմունքը՝ պաշտպանվածության զգացում, իսկ վստահությունը՝ հետագայում իրենց կյանքը կառուցելու հնարավորություն»:

«Սիրելի ուսուցիչներ, ձեզ հետ ենք բացում աշխարհի դռները, ձեզ հետ են թևածում մեր երազները». ապագա ուսուցիչներին շնորհավորեցին և իրենց սրտի խոսքն ասացին №104 դպրոցի 4ա դասարանի մի խումբ աշակերտներ, որոնք միգուցե տարիներ հետո ոտք դնեն համալսարանի շեմից ներս:

Հաղորդավար Արուս Այվազյանը առաջին կուրսեցիներին փոխանցեց արժեքներ՝ գիտելիք, պատասխանատվություն, հարգանք, արդարություն, մարդասիրություն, որոնք ուղեկցելու են նրանց ողջ կյանքի ընթացքում:



Երդման տեքստն ընթերցեց Կուլտուրայի ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողուհի Արինե Գրիգորյանը, և առաջին կուրսեցիները կրկնեցին երդման տեքստը, որն ավելի քան պարտավորեցնող էր. «Այսօրվանից զինվորագրվում եմ այն մեծ բանակին, որի առաջին ուսուցիչն է եղել Մեսրոպ Մաշտոցը...»

Ավանդական տոնական միջոցառումն ավարտվեց հայկական ազգային շուրջպարով:

***Ասրյան Սիլվա***

*Ուսուցիչը հպվում է հավերժությանը.*
*ոչ ոք չի կարող ասել,*
*թե երբ կավարտվի նրա ազդեցությունը:*
***Հենրի Ադամս***

***

*Կրթությունը ամենահզոր զենքն է,*
*որով կարելի է փոխել աշխարհը:*
***Նելսոն Մանդելա***

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԾԱՂԿԱՁՈՐՈՒՄ

# ՇԱԽՄԱՏԸ ՍՊՈՐՏ Է, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ



ՀՊՄՀ «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի Դպրոցական շախմատի միջազգային ֆեդերացիայի (ISCF) համագործակցությամբ հոկտեմբերի 1-2-ը Ծաղկաձորում անցկացվեց երկօրյա միջազգային գիտաժողով՝ «Շախմատը կրթության մեջ. տեսություն և պրակտիկա» խորագրով: Գիտաժողովին մասնակցում էին աշխարհի տարբեր երկրների գիտնական հետազոտողներ, դպրոցների ու համալսարանների ներկայացուցիչներ, գրոսմայստերներ ու շախմատի մարզիչներ, մանկավարժներ ու հոգեբաններ:

Գիտաժողովի նպատակն էր ներկայացնել շախմատի դերը կրթության և անձի զարգացման գործընթացում, հրապարակել իրականացրած գիտական հետազոտությունների արդյունքները, անդրադարձ անել ոլորտի զարգացման հեռանկարներին:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը ողջունեց գիտաժողովի մասնակիցներին և ընդգծեց, որ գիտաժողովը հերթական գիտական միջոցառումը չէ, այլ երկար տարիների աշխատանքի, փորձի ու միջազգային համագործակցության շարունակություն:

«Հայաստանում 2011 թվականից «Շախմատ» առարկան ընդգրկվել է հանրակրթական դպրոցի պարտադիր ուսումնական ծրագրում. դա ոչ միայն մեծ հնարավորություն է, այլև մեծ պատասխանատվություն. գիտականորեն հաստատել՝ ինչպիսի կրթական և զարգացնող ներուժ ունի շախմատը, ինչպես պետք է այն դասավանդել դպրոցում, ինչպես պատրաստել այդ աշխատանքի համար ուսուցչին և ինչ մեթոդներ կիրառել. հենց այս տրամաբանությունն է արտացոլված այսօրվա գիտաժողովում»,-ասաց Լիլիթ Մկրտչյանը:

Ռեկտորի պաշտոնակատարը կարևորեց քննարկվելիք թեմաները, որոնք վերաբում էին շախմատի և անձի զարգացմանը, շախմատի ուսուցման ժամանակակից մեթոդներին, ներառական կրթությանը, շախմատի ուսուցիչների պատրաստմանն ու մասնագիտական զարգացմանը, ինչպես նաև թվային տեխնոլոգիաների ու թվային գրագիտության կիրառմանը:

Լիլիթ Մկրտչյանը խոսեց գիտաժողովի միջազգային ու միջգիտակարգային կազմի մասին, կարևորեց գիտաժողովը՝ որպես տարբեր գիտական ավանդույթներ ու մասնագիտական փորձառություն ունեցող հետազոտողների հանդիպման հարթակ. «Մեզ համար կարևոր է , որ նույն հարթակում ներկայացվեն թե՛ շախմատի ճանաչողական ազդեցության վերաբերյալ հետազոտությունները, թե՛ ուսուցման մեթոդաբանությունը, ներառական կրթության փորձը, ուսուցիչների պատրաստման մոդելները և նոր տեխնոլոգիաների օգտագործման լուծումները»: Նա ընդգծեց՝ Մանկավարժական համալսարանի համար սա առանձնահատուկ նշանակություն ունի, և նույնիսկ ամենահետաքրքիր գիտական արդյունքը գիտական կրթական արժեք է դառնում, երբ այն տեղափոխվում է դպրոց և դառնում ուսուցչի գործիքը: Այդ համատեքստում Լիլիթ Մկրտչյանը կարևորեց այն փաստը, որ համալսարանում շախմատային հետազոտությունը, ուսուցիչների պատրաստումը, ուսումնական նյութերի պատրաստումն ու մշակումը և դպրոցական պրակտիկան դիտարկվում են որպես մեկ միասնական համակարգ՝ համադրելով տարբեր երկրների փորձը: Հենց այսպիսի մասնագիտական երկխոսությունն է թույլ տալիս տարբերակել համոզմունքները գիտական ապացույցներից և հասկանալ շախմատի մերօրյա սահմաններն ու հնարավորությունները:

Նա երկօրյա գիտաժողովի մասնակիցներին մաղթեց ստեղծել արդյունավետ համագործակցության միջավայր, որը կդառնա հետազոտական գաղափարների, գործընկերությունների և համատեղ ծրագրերի սկիզբ:

Ներկաներին ողջունեց ՀՊՄՀ Շախմատի և սպորտի ամբիոնի վարիչ Սմբատ Լպուտյանը, որը ներկայացրեց՝ ինչ է շախմատն իր պատկերացմամբ: Նա տարբերակեց երեք տեսակի շախմատիստների՝ շախմատիստներ, որոնց համար կարևոր է հաղթանակը, շախմատիստներ, որոնց համար շատ կարևոր է գիտական գործունեությունը,



գտնել նոր մտքեր իրականացնել դրանք, և շախմատիստներ, որոնք սիրում են իրենց ստեղծագործական հետաքրքիր կոմբինացիոն քայլերով ստեղծել գեղեցիկ ընթացք: Ըստ բանախոսի՝ առաջինը սպորտն է, երկրորդը գիտական տեսակն է, երրորդը արվեստն է: Շախմատիստների շրջանում հարցումները փաստում են՝ շախմատը սպորտ է, գիտություն է և մշակույթ: Սմբատ Լպուտյանը շախմատի վերոհիշյալ ձևակերպումների մասին իր մտորումները կիսեց ներկաների հետ: Այնուամենայնիվ, աշխարհն այսօր շախմատը դիտարկում է որպես սպորտ: 300 տարվա ընթացքում շախմատը տարբեր զարգացումներ ու ընթացք է ունեցել որպես սպորտ:

Բանախոսը կարևորեց շախմատի մերօրյա ընթացքը դեպի գիտություն՝ գիտահետազոտական տարբեր մոտեցումները:

Վիճակագրական փաստերը վկայում են, որ այս տարիների ընթացքում շախմատը որպես սպորտաձև իր շուրջն է համախմբել շուրջ կես միլիարդ շախմատիստների ու շախմատով զբաղվողների: Սմբատ Լպուտյանը լիահույս է, որ առաջիկա 3 տասնամյակներին շախմատով կզբաղվի ավելի քան մեկ միլիարդ մարդ:

«Ես հպարտ եմ, որ մեր գիտական կենտրոնը դառնալու է աշխարհի առաջիկա գործընթացների մի մասնիկը, -ասաց Սմբատ Լպուտյանը՝ շնորհավորելով և շնորհակալություն հայտնելով շախմատի բոլոր նվիրյալներին, գործընկերներին ու աջակիցներին:- Գիտաժողովն էլ մեկ քայլ է դեպի այդ գործընթացը, փոքրիկ ներդրում հասարակության գիտակցության համար»:

Սմբատ Լպուտյանի դիտարկմամբ՝ շախմատը բարիք է մարդկության և աշխարհի համար. նա մաղթեց, որ բարին ու իմաստնությունն առաջնորդեն իրենց այդ ճանապարհին:

Դպրոցականների շախմատի միջազգային ֆեդերացիայի գլխավոր տեխնիկական տնօրեն Անդրեյ Վոդիանովը կարևորեց ներկա հարթակում միջազգային մասնագիտական քննարկումների անցկացումը, որը կնպաստի շախմատի դասավանդման արդյունավետությանը, տեսական խնդիրների լուծմանն ու պրակտիկ կիրառմանը:

Գիտաժողովի օրերին մեկնարկել էր նաև դպրոցականների եվրոպական մայրցամաքային փուլի շախմատի մրցումները:

Այնուհետև ՀՊՄՀ ռեկտոր Լիլիթ Մկրտչյանը և Դպրոցականների շախմատի միջազգային ֆեդերացիայի նախագահ Անդրեյ Վոդյանովը կնքեցին փոխըմբռնման հուշագիր:

Գիտաժողովն ընթացավ հիբրիդային ձևաչափով՝ ներկաները լսեցին առկա և առցանց զեկուցումներ:

Առաջին զեկուցողը տնտեսագիտության և քաղաքական գիտությունների դպրոցի հետազոտող Ֆերնանդ Գոբեն էր, որը ներկայացրեց «Ճանաչողական բեռնաթափումը շախմատում» թեման: Նա խոսեց շախմատի միջոցով կոգնիտիվ /մտածական/ բեռնաթափման տեսակների մասին տարբեր մակարդակներում, բերեց օրինակներ, ապա արհեստական բանականությունը ներկայացրեց՝ որպես մրցակից՝ հարցադրում անելով՝ ինչ-որ դեր մնո՞ւմ է ուսուցչին, ինքն էլ պատասխանելով՝ լավ ներկայացնել՝ չի նշանակում լավ ուսուցանել:

Ամփոփելով՝ հոգեբանը վստահեցրեց՝ շախմատի տախտակը կոգնիտիվ բեռնաթափման գործիք է:

Շախմատային կրթության տեսության և պրակտիկայի զարգացման ապագա ուղղություններին անդրադարձավ Մինեսոտայի համալսարանի կրթական հոգեբանության պրոֆեսոր, գիտությունների դոկտոր Ուիլյամ Բարտը:

«Շախմատը և անձի զարգացումը» խորագրի ներքո զեկուցումներով հանդես եկան ՀՊՄՀ «Շախմատ» ինստիտուտի գիտական աշխատողները և արտերկրի հետազոտողները՝ Վահան Սարգսյանը, Սերոբ Խաչատրյանը, Վիկտոր Զարեցկին /Մոսկվա/, Մարիաննա Ամիրաղյանը, Ֆերնանդ Մորենոն, Անանդիտա Օբերոյը:

Ըստ կրթության փորձագետ Սերոբ Խաչատրյանի՝ փոքր քայլերը մեծ փոփոխությունների հիմք են: Շախմատի ուսուցման քայլերի ու մեթոդների տրամաբանության ներքո էլ «Շախմատի ուսուցման և ուսումնառության մեթոդներ» մասնախմբում զեկուցումներ ներկայացրին Քրիստինե Տանաջյանը, Անժելա Սարգսյանը, Մադալինա Լեջան Անուսկան, Մարիաննա Ավետիսյանը,




Ռենատ Օստերբախը:

Գիտաժողովի առաջին օրն ավարտվեց վարպետության դասերով:

Հոկտեմբերի 2-ին Ծաղկաձորում հայ և միջազգային մասնագետներն ամփոփեցին Մանկավարժական համալսարանի «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի և Դպրոցական շախմատի միջազգային ֆեդերացիայի (ISCF) համագործակցությամբ անցկացվող «Շախմատի կրթության տեսություն և պրակտիկա» խորագրով միջազգային գիտաժողովը:

Գիտաժողովի աշխատանքներն ընթացան տարբեր մասնախմբերում:

Իսպանիայի «Օլիմպիա» շախմատի ակադեմիայի նախագահ, հոգեբան և շախմատի կրթության մասնագետ Պեպ Սուարեսը վարպետության դաս վարեց:

«Այսօրվա գիտաժողովն աննախադեպ է թե՛ իր բովանդակությամբ, թե՛ ընդգրկմամբ, միջազգայնությամբ և արդիականությամբ: Շախմատային կրթությանը նվիրված թեման,



որ մեր երկրում բավականաչափ հետազոտված է և կրթական համակարգի բաղադրիչ, կարող է հետաքրքիր փորձ լինել աշխարհի տարբեր երկրների համար՝ ուսումնասիրելու և ինտեգրելու այդ փորձը»,- ասաց «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի ղեկավար Վահան Սարգսյանը՝ միաժամանակ հավելելով. «Մեր բացառիկ փորձն այն է, որ շախմատը ոչ միայն ներդրել ենք կրթության մեջ, այլև ձևավորել ենք հետազոտական կառույց, որը հետևում է բացահայտումների կիրառմանը ուսումնական գործընթացում, ուսումնասիրում, թե ինչ փոփոխություններ են տեղի ունենում, և ինչպես կարող են հետազոտությունն ու կրթությունը համաժամանակյա աշխատել միմյանց հետ»:

***Սիլվա Ասրյան***

# ԵՐԿՕՐՅԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ



Մանկավարժական համալսարանում անցկացվեց երկօրյա միջազգային համաժողով՝ «Ընթերցանության հմտությունների զարգացում՝ տեղեկատվության ընկալման և վերլուծության ինտեգրված մեթոդների միջոցով. արդյունքներ, ազդեցություն և փոխանցելիություն» խորագրով:

Նիտրայի Կոստանդին Փիլիսոփայի համալսարանի (Սլովակիա) ղեկավարությամբ գործող կոնսորցիումի կողմից նախագիծը միավորում է գործընկեր հաստատություններ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայից, Բալկաններից և Հայաստանից:

Մանկավարժականում անցկացվող համաժողովը համաֆինանսավորել էր Վիշեգրադյան հիմնադրամը:

Համաժողովին մասնակցում էին ներկայացուցիչներ Նիտրայի Կոստանդին Փիլիսոփայի համալսարանից (Սլովակիա), Բելսկո-Բյալայի համալսարանից (Լեհաստան), Պրահայի տնտեսագիտության և բիզնեսի համալսարանից (Չեխիայի Հանրապետություն), Էստերհազի կաթոլիկ համալսարանից (Հունգարիա), «Ալեքսանդր Մոիսիու» Դուրրեշի համալսարանից (Ալբանիա), ինչպես նաև Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից:

Ծրագրի նպատակն է տեղեկատվության ընկալման և վերլուծության ինտեգրված մեթոդների կիրառմամբ զարգացնել սովորողների ընթերցանության գրագիտությունը և տեղեկատվության մշակման հմտությունները՝ նպաստելով հավաստի և կեղծ տեղեկատվության տարբերակմանը, տեղեկատվության քննադատական վերլուծությանը, մեկնաբանմանը և գնահատմանը՝ ինչպես օտար, այնպես էլ մայրենի լեզուներով:

ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը կրթության գործընթացների համատեքստում կարևորեց համատեղ միջազգային նախագիծը, որը կենտրոնացված է արդի մարտահրավերների վրա, այն է՝ օտար լեզուներով և մայրենի լեզվով ընթերցանության ըմբռնում՝ զուգորդված տեղեկատվության մշակման հետ՝ ճշմարտացի տեղեկատվությունը կեղծից զանազանելու, այն քննադատաբար վերլուծելու, մեկնաբանելու և գնահատելու կարողության զարգացման նպատակով:

Լիլիթ Մկրտչյանն ընդգծեց՝ համաժողովի անցկացումը միտված է հաստատելու ծրագրի շրջանակներում մշակված ուսումնական նյութերի ժողովածուի՝ «Ընթերցանության գրագիտության միջամտված զարգացման ծրագրի (ՄԾ)» գործառնական կարողությունները, որոնք ստեղծվել են Erasmus+ նախագծի շրջանակներում՝ հիմք ունենալով նախորդող երկու ազգային հետազոտական նախագծերը (APVV և VEGA), որոնց ընթացքում հաջողությամբ բացահայտվել էին ընթերցանության գրագիտության զարգացման հիմնական կանխորոշիչները:

«Ընթացիկ նախագծում մենք հանձնառու ենք տարածել ձեռք բերված գիտելիքները և մեկ անգամ ևս հավաստիանալ, որ առկա նյութերը հավասարապես կիրառելի և արդյունավետ են տարբեր կրթական միջավայրերում»,-ասաց ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը՝ մատնանշելով նպատակին հասնելու համար կազմակերպվող մասնագիտացված վերապատրաստումները և սեմինարները դասավանդողների համար, որոնք էլ իրենց դպրոցներում կներդնեն օտար լեզուներով ընթերցանության ըմբռնման հիմնարար և հետազոտություններով հիմնավորված սկզբունքները և տվյալներ կհավաքեն՝ դրանց գործարկման վերաբերյալ:

Համաժողովի առաջին օրը Նիտրայի Կոնստանտին Փիլիսոփայի անվան համալսարանի ներկայացուցիչներ Զդենկա Գադուշովան և Եվա Ստրանովսկան հանգամանորեն ներկայացրին ծրագրի նպատակները, գործողությունները և ձեռքբերումները, իսկ ՀՊՄՀ Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանն անդրադարձավ «Ընթերցանությունը ընկալողական հմտությունների սահմաններից այն կողմ» թեմային:







Այսօր սովորողները գործում են թվային միջավայրերում, որտեղ անհրաժեշտ է արագորեն հասկանալ, վերլուծել և համադրել տարբեր աղբյուրներից ստացվող տեղեկատվությունը: Ուստի մեր խնդիրն է նրանց զինել այնպիսի հմտություններով, որոնք ընթերցանությունը կվերածեն խորքային ըմբռնման, իսկ տեղեկատվությունը՝ իմաստալից գիտելիքի»,-ասաց ռեկտարի պաշտոնակատարը:

Ըստ բանախոսի՝ «նախաձեռնությունը ուղղակիորեն լուծում է ներգրավված տարածաշրջաններում սովորողների ընթերցանության գրագիտության և տեղեկատվության ճանաչման ու մշակման ոլորտում առկա ճանաչված խնդիրները՝ միաժամանակ խթանելով օտար լեզուների ուսուցիչների մասնագիտական մանկավարժական կարողությունները»:

Լիլիթ Մկրտչյանն ընդգծեց, որ աշխատանքի կարևորագույն արդյունքը օտար լեզուների ընթերցանության գրագիտության ոլորտում ձեռք բերված լավագույն փորձի հնարավոր փոխանցումն է, որը կնպաստի նաև մայրենի լեզվով ընթերցանության գրագիտության զարգացմանը: Մերօրյա ուսուցիչներին՝ որպես փոփոխության առաջնագծի ճարտարապետների, նա հորդորեց ամենօրյա աշխատանքում մանկավարժական մոտեցումները վերածել սովորողների իրական հաջողությունների, նաև հույս հայտնեց, որ հետազոտողների, միջազգային գործընկերների և մասնակիցների համատեղ երկխոսությունն ու գործակցային ոգին կօգնեն նախանշելու գրագիտության ուսուցման, ըմբռնման և արժևորման ապագա ուղին:

Ծրագրի կիրառման և փորձարկման արդյունքները, նաև ուսանողների փորձն ու արձագանքները, ներկայացրին Դուրրեշի «Ալեքսանդր Մոիսիու» համալսարանի Օտար լեզուների ամբիոնի վարիչ Անիտա Մուհոն և ՀՊՄՀ Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Մանանա Դալալյանը:

Նիտրայի Կոնստանտին Փիլիսոփայի անվան համալսարանի ներկայացուցիչ Իվանա Պուլիկովայի զեկուցումը վերաբերում էր Ընթերցանության միջոցով քննադատական մտածողության զարգացման թեմային:

«Սա միջազգային ծրագիր է, որը սկզբնավորվել է Էրազմուս+ ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտությունների հիման վրա, և հետագայում հետազոտությունն այնքան հաջող է եղել կրթության ոլորտում ընթերցանության, ընթերցանության միջոցով տեղեկատվության զարգացման, վերլուծության սկզբունքների և խնդիրների վերաբերյալ, որ «Վիշեգրադ» հիմնադրամը վերցրել է և կիրառել բոլոր մշակած սկզբունքներն ու դուրս բերված եզրակացությունները՝ ծրագիրն էլ ավելի զարգացնելու և կիրառական դարձնելու համար»,-ասաց Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանը:

Որքանով է այն կարևոր մեզ համար և ինչ ակնկալիքներ ունենք հարցի համատեքստում Տիգրան Միքայելյանը մեզ համար կարևորեց երկու հանգամանք. այն համահունչ է ԿԳՄՍ նախարարության՝ այս տարին ընթերցանության տարի հայտարարելուն, դիտարկելով ընթերցանությունը որպես կարևորագույն հմտություն՝ տեղեկատվությունը ճիշտ դիտարկելու, տարբերակված ձևով ընկալելու և քննական մոտեցմամբ վերլուծելու համար: Ու նաև իրավացիորեն նկատեց՝ կրթական գործընթացում առանց ընթերցանության հնարավոր չէ իրականացնել որևէ լուրջ գործառույթ:

Դեկանի դիտարկմամբ՝ պետք է հաշվի առնել ևս մեկ հանգամանք՝ եվրոպացի գործընկերները մեզ ոչ միայն դիտարկում են որպես թեստավորման, փորձարկման դաշտ, այլ հետադարձ կապի ու ծրագիրը, գործընթացը էլ ավելի մշակելու, կատարելագործելու համար:

Նա կարևորեց ծրագիրը որպես համաեվրոպական կրթական քաղաքականության կարևորագույն հետազոտական ծրագրերի մաս, ընդգծելով՝ կրթության ոլորտում հետազոտության կարևորագույն բաղադրիչներից մեկը հենց ընթերցանությունն ու տեքստի ընկալումն է:

Ծրագիրը կծանոթացնի մեր ուսուցչական համակազմին ընթերցանության ինչ այլընտրանքային մեթոդաբանություն կա և ինչպես կարելի է ընթերցանությունը որպես զուտ տեքստի ընկալում վերածել ավելի ստեղծագործականի՝ վստահեցրեց Տիգրան Միքայելյանը:

Համաժողովի երկրորդ օրը ևս հագեցած էր զեկուցուկներով, Հայաստանի և գործընկեր երկրների հետազոտողների զեկուցումներով ու ակտիվ քննարկումներով, հայաստանյան փորձի ներկայացմամբ:

***Սիլվա Ասրյան***

# «Աշխարհացույցը» Մանկավարժականում



«Աշխարհացույցը» ուսուցչական համայնքի հետազոտությունների առանցքում. Մանկավարժական համալսարանում սեպտեմբերի 30-ին անցկացվեց «Աշխարհացույցի» եռամսյա վերապատրաստուների «Հետազոտող ուսուցիչ» ուղղության ավարտական աշխատաժողով, որի նպատակն էր ներկայացնել իրականացված ուսուցչական հետազոտությունները՝ միաժամանակ ստեղծելով դպրոցական և բուհական կրթական միջավայրերի մասնագիտական երկխոսության հարթակ:



Աշխատաժողովը նպատակ ուներ միավորել ուսուցիչ-ապագա ուսուցիչ-դասախոս օղակները, ինչը հետազոտահեն մանկավարժական մշակույթի ձևավորման հնարավորություն կընձեռի, կնպաստի դպրոց-բուհ կապի ամրապնդմանը, ինչպես նար ուսուցչի մասնագիտական զարգացման շարունակականությանը:

Ելույթ ունեցան և աշխատաժողովի անցկացումը Մանկավարժական համալսարանում ողջունեցին ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը և «Աշխարհացույց» նորարարական կրթական հարթակի հեղինակ, «Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Հովհաննես Ղազարյանը:

«Շատ կարևոր է ճանաչել միմյանց, իմանալ իրար կարիքները և այդպես շարունակել առաջ գնալ»,-ասաց Լիլիթ Մկրտչյանը, որը քաջ տեղյակ է հարթակի ստեղծման պատմությանը՝ ցանկությունից ու գաղափարից սկսած: Նա ընդգծեց, որ կրթությունը ամեն ինչի հիմքն է, որ այն պետք է լինի հետազոտահեն, իսկ «Աշխարհացույցի» հիմքում նույնպես պետական չափորոշիչներն են: Լիլիթ Մկրտչյանը նշեց, որ համալսարանի առաջիկա կառուցվածքայի փոփոխությունների հիմքում պետք է ընկած լինի գիտելիքահենից անցումը դեպի կարողունակահեն կրթություն, և ներկա աշխատաժողովի անցկացումն էլ այդ նպատակին միտված մեկ քայլ է:

Հովհաննես Ղազարյանը թիմի անունից շնորհակալություն հայտնեց բուհի ղեկավարությանը՝ փաստելով, որ իրենց գործունեությունը ուսուցիչների հետ շփման միջոցով է իրականացվում, և որ ուսուցիչներին պատրաստողը Մանկավարժական համալսարանն է: «Ուսուցիչները մեր ապագան ծրագրավորողներն են». հաճախ է այս տողերն արտահայտում կրթական նորարարական հարթակի ղեկա-



վարը, որը վստահեցնում է՝ այս համալսարանում են ձևավորում մարդկանց, որոնք մեր ապագան ձևավորողներն են:

Ծրագրի ղեկավար Արևիկ Ավետիսյանը ամփոփ ներկայացրեց ուսուցիչների եռամսյա ծրագրի հետազոտությունների արդյունքները, իսկ «Աշխարհացույցի» փորձագետ Հայկանուշ Ղևոնդյանը հանգամանորեն ներկայացրեց կրթական նորարարական հարթակից օգտվելու հնա-



րավորություններն ու գործիքները, ինչը կհեշտացնի ուսուցչի դասը վարելու գործընթացը, որին նա կարող է միանալ դասապրոցեսի ընթացքում:

Հանրապետության տարբեր դպրոցների 13 ուսուցիչներ ներկայացրին իրենց հետազոտությունների արդյունքները. ըստ «Աշխարհացույցի» աշխատակազմի՝ այդ արդյունքների համադրումն ու քննարկումը հնարավորություն կտան ձևավորելու հետադարձ կապ՝ առավել զարգացնելու և կատարելագործելու «Աշխարհացույցի» կրթական գործիքները, վերապատրաստումները և «Հետազոտող ուսուցիչ» ուղղությունը:

Տարբեր մասնախմբերում մոդերատորները ներկայացրին նորարարական կրթական հարթակի ազդեցությունը ուսուցման արդյունավետության վրա, թվային վիզուալ ռեսուրսների կիրառումը առարկայական դասավանդման մեջ՝ «Աշխարհացույց» կրթական հարթակի միջոցով, ինչպես նաև «Աշխարհացույցը» որպես ներառական կրթության ապահովման միջոց:

ՀՊՄՀ դասախոսների, ուսանողների և աշխատող ուսուցիչների համատեղ մասնակցությունը այս ծրագրին հնարավորություն կտա դասարանական փորձի հետազոտական արդյունքները բերել համալսարանական միջավայր՝ այն դարձնելով մասնագիտական քննարման ու վերլուծության նյութ՝ դպրոց-բուհ կապի ամրապնդման համատեքստում ապահովելով հետադարձ կապը:

Հանդիպման սկզբում ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը և «Աշխարհացույց» նորարարական կրթական հարթակի հեղինակ Հովհաննես Ղազարյանը ստորագրեցին համագործակցության հուշագիր:

# ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԼԱՐԱՆՈՒՄ ԷՐ





Մանկավարժական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանն ընդունեց Հայաստանում Հունգարիայի գործերի ժամանակավոր հավատարմատար Ալեքսանդրա Չիզմադիային, հյուպատոս Պիտեր Տարչային և Ֆերենց Ռակոցի II-ի անվան Անդրկարպատիայի հունգարական համալսարանի դասախոս, պրոֆեսոր Նատալյա Վարադինին:

Հունգարիայի գործերի ժամանակավոր հավատարմատարը նոր է Հայաստանում, բայց արդեն ակտիվ գործունեություն է ծավալում՝ տարբեր ծրագրերով համագործակցելով համալսարանների հետ:

Խոսակցություն ծավալվեց համագործակցութան առաջիկա հնարավոր ուղղությունների շուրջ, ապա Ալեքսանդրա Չիզմադիան ներկայացրեց Տրանսկարպատիայում հունգարական համալսարանի պրոֆեսոր Նատալյա Վարադինին, որը դասախոսությամբ հանդես կգա ՀՊՄՀ-



ում և ԵՊՀ-ում: Դասախոսության հիմնական թեման 1956 թվականի հունգարական հեղափոխությունն է, որի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ այս տարի տոնում են հեղափոխության 70-ամյակը:

Հունգարիայի դեսպանատան գործերի հավատարմատարը ներկայացրեց՝ առաջիկայում տարբեր ծրագրեր կիրականացնեն համալսարանի հետ՝ համագործակցությունը դարձնելով ավելի սերտ և շոշափելի:

ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը ներկայացրեց հանդիպմանը ներկա բուհի պրոռեկտորներ Նաիրա Սաֆարյանին և Մարիամ Իսպիրյանին, ապա իր ջերմ վերաբերմունքն արտահայտեց հայ-հունգարական կապերի ամրապնդման ու ընդլայնման մասին:

Ֆերենց Ռակոցի II-ի Անդրկարպատիայի համալսարանի դասախոս պրոֆեսոր Նատալյա Վարադինը Մանկավարժական համալսարանի ուսանողների առաջ հանդես եկավ դասախոսությամբ, որը նվիրված էր հունգարական հեղափոխությանը, ինչպես նաև Տրանսկարպատիայի և հունգարական հեղափոխության առնչություններին:

Հավելենք, որ պրոֆեսորի մասնագիտական հետաքրքրությունների շրջանակում է Անդրկարպատիան՝ խորհրդային և մասնավորապես խրուշչովյան ժամանակաշրջանում, ինչպես նաև այդ տարածաշրջանի եկեղեցիներն ու տնտեսության պատմությունը:

***Սիլվա Ասրյան***

ՀՊՄՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

# «Ուսուցչի աշխատանքն էլ է ստեղծագործություն. ամեն պահի մենք մտածում ենք իրավիճակները ինչպես լուծել...»,-ասում է Նաիրի Բալաբեկյանը



**-Հարգելի Նաիրի, տղամարդիկ հազվադեպ են ընտրում ուսուցչի մասնագիտությունը: Ինչո՞վ էր պայմանավորված քո ընտրությունը:**

-Ուսանող լինելու տարիներին շատ ակտիվ եմ եղել, սիրել եմ նաև ուսանողների հետ աշխատել, շփվել, իսկ երբ ուսանողական խորհրդի նախագահ էի՝ աջակցում էի ուսանողներին, ինչով կարողանում էի, որպեսզի հաղթահարեն դժվարությունները:

Տեսնելով, թե ինչ որակների կրողներ են իմ դասախոսները և ինչ նվիրում ունեն աշխատանքի և ուսանողների հանդեպ, հենց դա էլ իմ մեջ առաջացրեց մեծ սեր դեպի մանկավարժությունը: Հետագայում, երբ մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող էի, համալսարանական հիմնական և ավագ դպրոց-վարժարանում աշխատելու առաջարկ ստացա: Երկար տարիներ համատեղությամբ այդ դպրոցներում աշխատելուց հետո զգացի, որ մանկավարժությունն այն ամենն է, ինչը որ ես պետք է անեմ՝ ոչ միայն կրթելու, սովորեցնելու, այլ նաև հայկականը, ավանդականը և մեր մշակույթը պահպանելու, ներկայացնելու գործում պետք է ունենամ իմ ներդրումը: Դպրոցից պետք է սկսենք դա՝ տարրականից մինչև ավագ դպրոց մեր աշակերտների մեջ պետք է ներմուծենք այն գաղափարը, որ մեր ազգային մշակույթը ներկայացնում է մեր դիմագիծը, մեր ընտանիքը, մեր կենցաղը:

**-Ինչպիսի՞ն պետք է լինի մերօրյա ուսուցիչը, որ հաջողության հասնի: Մեր օրերում հե՞շտ է աշխատել ուսուցիչ, երբ համացանցն ավելի է գրավում սովորողին որպես գիտելիքի ու տեղեկատվության անսպառ աղբյուր:**

-Մեր օրերում իսկապես շատ դժվար է ինչ-որ նոր բան ավելացնել, անել, քանի որ տեղեկատվական տեխնոլոգիաներն ունեն շատ մեծ ինֆորմացիա, արտահոսք: Ուղղակի մեր օրերի ուսուցիչը պետք է քայլի մեր ժամանակներին համընթաց՝ ուսումնասիրելով նոր մեթոդները, նոր տեխնոլոգիաները, նոր մեթոդները համադրի նախկին մեթոդների հետ: Աշակերտները շատ ճկուն են և կարողանում են օգտվել նոր տեխնոլոգիաներից, մենք պիտի կարողանանք ուղղորդել նրանց՝ ճիշտ օգտվել և վերցնել օգտակար ինֆորմացիա:

Թերևս նկարչության և արվեստի մասով մենք տարբերվում ենք. մերը ստեղծագործական կյանք է և ապրումներ, որը չկա տեխնոլոգիայում, ոչ մի տեխնոլոգիա չի կարող այդ ապրումները փոխանցել. նկարչությունը զգացական մասնագիտություն է, հոգեվիճակ, որը մանկավարժը պիտի փոխանցի և աշակերտը պիտի զգա՝ մեծ տարբերություն կա տեխնոլոգիայի և մարդկային զգացողությունների ու հոգեվիճակի միջև:

**-Կրթության ոլորտի մարտահրավերները բազմաթիվ են. ինչպե՞ս ես հաղթահարում այդ մարտահրավերները:**

-Կրթության ոլորտում շատ են մարտահրավերները, և մենք պիտի պատրաստ լինենք դրանց: Ժամանակները փոխվել են, պահանջները՝ նույնպես, իսկ մենք պիտի քայլենք ժամանակի և համաշխարհային միտումների պահանջներին համահունչ: Մենք պիտի միշտ պատրաստ լինենք յուրաքանչյուր փոփոխության. ժամանակը բերում է ցնցումներ ու փոփոխություններ, որոնք մենք միշտ հաղթահարել ենք, բայց փոփոխությունները մենք պետք է անենք ի շահ աշակերտի ու նաև հօգուտ մանկավարժի:

**-Ինչո՞ւ ընտրեցիր «Կերպարվեստ» մասնագիտությունը և ի՞նչ հաջողություններ ամրագրեցիր այդ ոլորտում:**

- Փոքրուց նկարել եմ՝ ներշնչվելով Ապարանի իմ հրաշք գյուղի՝ Հարթավանի բնությամբ ու Արագածով: Ամբողջ կյանքս անցկացրել եմ գյուղական միջավայրում, որն ինձ ոգեշնչել է, միաժամանակ ունենալով արյանս մեջ նկարչության հանդեպ սերը, ստացվեց այն, ինչ հիմա ունեմ: Իմ դասախոսներից նույնպես ոգեշնչվեցի, իմ վարպետների շնորհիվ օրեցօր ամրապնդվեց սերը դեպի նկարչությունը:

Իմ հաջողություններից եմ համարում ստեղծագործություններիս ցուցահանդեսը, նաև այն, որ դեռ բուհը չավարտած, ինձ մանկավարժական աշխատանք առաջարկեցին: Այժմ համատեղությամբ դասավանդում եմ ՀՊՄՀ ավագ դպրոց-վարժարանում և Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Կերպարվեստի և դիզայնի ամբիոնում: Թեև ավագ- դպրոց վարժարանում ծանրաբեռնվածությունն ավելի մեծ է, բայց երկուսն էլ համարում եմ իմ մեծ հաջողությունների մուտքն ու շարունակությունը:

**-Համալսարանական դպրոցում քո աշակերտների հետ տարբեր ցուցահանդեսներ ես կազմակերպել. նրանց մեջ տեսնո՞ւմ ես քո գործի շարունակողներին:**

-Մանկավարժական համալսարանի հիմնական դպրոցում աշխատելու տարիներին շատ կապվեցի երեխաների հետ, և դա երկկողմանի էր: Հանգամանքների բերումով թողեցի հիմնական դպրոցի աշխատանքը և շարունակեցի աշխատանքը ավագ դպրոցում: Այստեղ ունեմ աշակերտներ, որոնց դասավանդել եմ 1-ին և 2-րդ դասարաններում, և ֆակուլտետում ունեմ ուսանողներ, որոնց դասավանդել եմ ավագ դպրոցում. սերունդների կապը այսպես շղթայական զարգացել է, և իմ կապվածությունը նրանց հետ շատ մեծ է:

**-Ե՞րբ է աշակերտն ընտրում ուսուցչի մասնագիտությունը՝ երբ սիրում է ուսուցչի՞ն, թե՞ առարկան:**

-Երկուսը միասին. ուսուցիչը պետք է շատ հստակ ու խիստ պահանջներ դնի, բայց յուրաքանչյուր խստության հիմքում նաև սեր դնի: Եթե աշակերտն այդ սերը չի տեսնում, միայն տեսնում է խստություն, դա վանում է նրան: Ես իմ աշակերտներին առաջին հերթին տալիս եմ սեր և պահանջում եմ. այդ սիրո հիմքի վրա նրանք ունենում են ձգտումներ և ուսուցչի օրինակ, որի դեպքում վերցնում են ամեն ինչ՝ գիտելիք, վերաբերմունք, պահվածք. ոչինչ չեն անտեսում և ոչնչի հանդեպ անտարբեր չեն լինում:

**-Շա՞տ են այսօրվա ուսուցչին ներկայացվող պահանջները, ժամանակի առումով հնարավո՞ր է այդ պահանջներն անթերի կատարել:**

-Աշխատանքի ընթացքում թերություններ, միանշանակ, կլինեն, որովհետև ինչքան էլ մենք փորձ ունենանք, աշխատանքի ընթացքում լինում են դեպքեր, որոնք հատուկ լուծում են պահանջում: Ուսուցիչը պետք է լինի ճկուն ու համագործակցային յուրաքանչյուր իրավիճակում, հատկապես երբ դասարանում լինում են զարգացման հատուկ խանգարումներ ունեցող երեխաներ, պետք է կարողանալ բոլորին ներգրավել դասապրոցեսի մեջ, խնդիրներ չունենալ ո՛չ աշակերտական, ո՛չ ծնողական համայնքի հետ:

**-Ի՞նչ է պետք լավ ուսուցիչ լինելու համար:**

-Լավ ուսուցիչ լինելու համար առաջին հերթին պետք է ունենալ խոր հոգևոր աշխարհ, որպեսզի երեխաների մեջ տեսնենք մեր գործի շարունակողներին, նրանց համարենք մեր ընտանիքի անդամներ, որովհետև օրվա մեծ մասը անց ենք կացնում ոչ թե մեր սեփական երեխաների, այլ սովորողների հետ: Ես նրանց միշտ ասում եմ՝ իմ դիտողությունը կարող է լինել հայրական դիտողություն, ավագ ընկերոջ դիտողություն, ոչ թե պատժելու միջոց, որի նպատակն է նրանց համար ճիշտ միջավայրի ստեղծումը: Ուսուցիչը պետք է սիրի երեխային, երբեք չչարանա:

Ես գիտեմ, որ գիտելիք փոխանցելուց առաջ նախ պետք է հասկանամ բոլոր երեխաներին, որովհետև նրանք տարբեր հոգեվիճակներում, տան մթնոլորտում ձևավորված տարբեր իրավիճակներից կարող են գալ դասի, և ես պիտի կարողանամ հասկանալ, լուծում տալ և աշակերտներին ներգրավել դասին, միշտ լինեմ նրանց կողքին և այդ հոգեվիճակները փոխեմ դեպի ավելի լավը:

**-Որպես ՀՊՄՀ շրջանավարտ, գո՞հ ես այն կրթությունից որ ստացել ես համալսարանում: Տարիների ընթացքում ինչպե՞ս ես զարգացրել ստացած գիտելիքներդ:**

-2009-ին ընդունվել եմ համալսարան և 2013-ին ավարտել եմ բակալավրի կրթական ծրագիրը, ապա 2013-ից 2015 թվականը սովորել և ավարտել եմ մագիստրատուրան:

ՀՊՄՀ-ն ինձ համար եղել է ճակատագրական, որովհետև իմ ֆակուլտետն ինձ ամեն ինչ տվել է: Ուսանողական տարիներին բարձր կուրսերից արդեն դասավանդելով, զբաղվելով մանկավարժությամբ, ես ամեն օր սովորում եմ մանկավարժության մեջ, աշխատում եմ իմ զարգացման վրա, և իմ ուսուցիչների՝ տարբեր մանկավարժական իրավիճակներում մոտեցումները ինձ համար դարձել են օրինակ:

Առհասարակ Մանկավարժական համալսարանն ինձ տվել է ամեն ինչ՝ ոչ միայն կրթելով, այլև կարևորելով մեր մարդ տեսակը, ուղղորդել է արվեստի ոլորտում և մանկավարժության մեջ ինչպես ճիշտ դրսևորումներ ունենալ:

Մագիստրատուրայում սովորելու տարիներին Մարտիրոս Սարյանի անվան կրթաթոշակ եմ ստացել, Հայաստանի «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխությանը զբաղեցրել եմ 2-րդ տեղը, արժանացել տարբեր պատվոգրերի ու մեդալների:

Մանկավարժական համալսարանի և իմ ֆակուլտետի դերակատարությունը շատ մեծ է իմ կյանքում, իսկ ավագ դպրոց-վարժարանը մանկավարժության մեջ իմ կայացման ու ձևավորման առումով անփոխարինելի է:

Պարզապես ուսուցչի բազմազբաղ աշխատանքը քիչ հնարավորություն ու ժամանակ է ընձեռում ստեղծագործական աշխատանքով զբաղվելու համար. բոլոր դեպքերում երեկոյան ժամերին փորձում եմ նկարել: Որովհետև կերպարվեստի ուսուցիչը պետք է նկարի, և նյութերի տեխնոլոգիան, մոտեցումները սովորողներին մատուցելու համար պետք է նաև կիրառել՝ տեսականը համադրելով գործնականին:

Ուսուցչի աշխատանքն էլ է ստեղծագործություն. ամեն պահի մենք մտածում ենք իրավիճակները ինչպես լուծել...

**- Ի՞նչ կմաղթես գործընկերներիդ Ուսուցչի օրվա առթիվ:**

-Իմ գործընկեր ուսուցիչներին մաղթում եմ բոլոր դեպքերում լինել համբերատար, որովհետև չհամբերելն է մեզ սպառում, իսկ համբերելու դեպքում բոլոր իրավիճակներում մենք արդյունք տեսնում ենք: Երբ կա խնդիր, կա անհանգստություն՝ համբերատար լուծումների ընթացքում հասնում ենք լավ վերջնարդյունքի:

Բոլորին մաղթում եմ համբերություն, ջերմություն, կենտրոնացում, որովհետև ֆիզիկական կաղությունը բոլորի համար է, լուծել հնարավոր է, իսկ հոգևոր կաղությունը ուսուցչի համար չէ:

Ես շատ լավ միջավայրում եմ աշխատում, վարժարանի իմ կոլեգաները մեծ նվիրումով, ոգևորությամբ ու սիրով են աշխատում, և այնպիսի տպավորություն ունեմ, թե ես տանն եմ:

*Հարցազրույցը՝ Սիլվա Ասրյանի*

*ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ*

# ԱՊԱԳԱՅԻ ԴՊՐՈՑԸ ՏՊԱՎՈՐԻՉ ԷՐ



ՀՀ ԿԳՄՍ նախարարության ձեռնարկած օրինակելի ծրագիրը՝ «Ընթերցող Հայաստան» պատգամով անմիջականորեն կապվում է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի գործունեության հետ: Դա նաև մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի երազանքն էր՝ հայ երեխային տեսնել ընթերցելիս, գիտելիքներ յուրացնելիս: Արդեն բանասիրական ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Աշոտ Գալստյանը և փոխդեկան դոցենտ Նաիրա Խաչատրյանը ուսանողների հետ սեմինարներ են կազմակերպում՝ մեթոդական ձևերով բացատրելով նախարարության հանձնարարականի կարևորությունը և այն իրացնելու տարբեր ձևերը:

Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանը, որը հմուտ մանկավարժ-գիտնական է, իրականացնում է անզուգական հայագետ, միջազգային համբավ ունեցող գիտնական, մեծ մանկավարժ Նիկողայոս Մառի այն տեսակետը, թե իսկական մանկավարժը, անկախ դպրոցում է, թե բուհում, պետք է շարունակական գիտական աճ ունենա: Նա պետք է նմանվի խնձորի, որի կարդալ «Ընթերցող Հայաստան» ծրագրի շրջանակներում: Չափազանց հաճելի էր, որ դպրոցը տեսանք ցանկալի վիճակում: Այն խնամված այգու մեջ է, հրաշալի վերանորոգված, մաքրությամբ փայլող: Դպրոցի տնօրենը մեր գերազանցիկ շրջանավարտ, մագիստրոսական թեզը փայլուն պաշտպանած հայոց լեզվի և հայ գրականության մասնագետ Նարինե Շահբազյանն է, որը նաև հանձնել է ասպիրանտուրայի համար նախատեսված որակավորման քննությունները և ունի գիտական հոդվածներ:

Դպրոցն ունի 300 աշակերտներ, որոնք իրենց ուսուցիչների հետ լսեցին իմ և Աշոտ Գալստյանի դասախոսությունները: Մենք զրուցեցինք նաև առանձին ուսուցիչներ կամենում են խորանալ մաթեմատիկա առարկայի մեջ և արհեստական բանականությանը հանձնած քննությամբ կարող են ընդունվել բուհ:

«ԱԲ» դասասենյակը կահավորված էր անհրաժեշտ շատ թանկ համակարգիչներով, իսկ այդ դասարանից





ուղիղ կեսը մանկավարժն է, իսկ մյուս կեսը՝ գիտնականը: Իսկ գիտնական լինել նշանակում է շարունակ ընթերցել ու հետազոտել, ինչպես հանճարեղ Նարեկացին էր ասում իր թղթերից մեկում, որ ինքը «հանապազ ընթերցում է»:

Հոկտեմբերի 9-ին Աշոտ Գալստյանը և ես այցելեցինք Արարատ քաղաքի ավագ դպրոց՝ իրավամբ ապագայի դպրոց: Այցելության նպատակն էր՝ դասախոսություններ

որոնք կամենում են խորանալ մաթեմատիկա առարկայի մեջ և արհեստական բանականությանը հանձնած քննությամբ կարող են ընդունվել բուհ:

«ԱԲ» դասասենյակը կահավորված էր անհրաժեշտ շատ թանկ համակարգիչներով, իսկ այդ դասարանից

ուղիղ կեսը մանկավարժն է, իսկ մյուս կեսը՝ գիտնականը: Իսկ գիտնական լինել նշանակում է շարունակ ընթերցել ու հետազոտել, ինչպես հանճարեղ Նարեկացին էր ասում իր թղթերից մեկում, որ ինքը «հանապազ ընթերցում է»:


Հոկտեմբերի 9-ին Աշոտ Գալստյանը և ես այցելեցինք Արարատ քաղաքի ավագ դպրոց՝ իրավամբ ապագայի դպրոց: Այցելության նպատակն էր՝ դասախոսություններ

րի հետ, որոնց մի մասը մեր բուհի շրջանավարտներ են:

Հատկապես տպավորիչ էր ավագ դպրոցի տեխնիկական հագեցվածությունը: 2026-2027 ուսումնական տարում «Արհեստական բանականության սերունդ» ծրագիրն արդեն հասանելի է Արարատ քաղաքի ավագ դպրոցի աշակերտներին: Ուշագրավ է, որ այդ ծրագրով կարող են սովորել նաև տարածաշրջանի մյուս դպրոցների 9-րդ դասարանն ավարտած այն աշակերտները, օգտվող աշակերտների դեմքերը ներշնչող էին, ինչպես որ հավատ էր ներշնչում նրանց մաթեմատիկայի ուսուցչուհին:

Բանասիրական ֆակուլտետի կապը հանրապետության դպրոցների հետ եղել է և մնում է շարունակական այն խոր հավատով, որ Հայաստանի ապագան լուսավոր է:

# ՆՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ



Բանասիրական ֆակուլտետը շարունակում է ամրապնդել կապերը սփյուռքահայ գաղթօջախներում գործող հայկական դպրոցների հետ: Հերթական առցանց հանդիպումը կազմակերպվեց Ամստերդամի Գրիգոր Նարեկացու անվան կիրակնօրյա դպրոցի անձնակազմի հետ: Դպրոցը գործում է շուրջ 20 տարի և ամստերդամաբնակ հայերի՝ հայեցի կրթության հիմնական կրթօջախն է, որտեղ հայոց լեզու, հայ գրականություն և հայրենագիտություն են սովորում 5-ից 14 տարեկան հայ երեխաները:

Ողջույնի խոսքում բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Գալստյանը ընդգծեց մանկավարժական մայր բուհի բանասիրական ֆակուլտետի և Սփյուռքում գործող հայկական կրթօջախների համագործության կարևորությունը՝ ներկայացնելով այն ուղղությունները, որոնց շրջանակներում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը կարող է օգտակար լինել Գրիգոր Նարեկացու անվան կիրակնօրյա դպրոցին: Նշենք, որ պրոֆեսոր Գալստյանն ամռանը եղել է Ամստերդամում, այցելել դպրոց, որտեղ էլ Սուրբ Հոգի հայ առաքելական եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Տարոն քահանա Թադևոսյանի միջնորդությամբ էլ համագործակցելու պայմանավորվածություն էր ձեռք բերվել:

Դպրոցի տնօրեն Վահան Ավագյանը, նախաձեռնության համար շնորհակալություն հայտնելով բանասիրական ֆակուլտետի ղեկավարությանը, ներկայացրեց կիրակնօրյա դպրոցի առանձնահատկությունները, կառուցվածքը, դասավանդող մասնագետներին: Դպրոցի ուսումնական դասընթացների պատասխանատու, ծրագրերի կազմող և ուսուցչուհի Ալիսա Մովսեսյանը, խոսելով մեկօրյա դպրոցի առօրյայի մասին՝ վեր հանեց ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված դժվարությունները. հիմնական խնդիրը, ըստ տիկին Մովսեսյանի՝ դասագրքերի բացակայությունն է: Հայաստանի դասագրքերը կազմվում են ամենօրյա դպրոցների համար և օտարալեզու սովորողներին այնքան էլ հասու չեն և արդյունավետ չի դրանցով կազմակերպել մեկօրյա դպրոցի ուսումնական պլանը՝ արդյունքում մասնագետները ստիպված են այլ ուղիներ փնտրել՝ մատչելի ձևով հայոց լեզվի հիմնական դասընթացները իրականացնելու համար: Դժվարություններ են առաջանում նաև սովորողների տարիքային տարբերությունների հետ կապված: Այլ խնդիր է դպրոցում կամավոր սկզբունքներով աշխատող ուսուցիչների՝ հայոց լեզվի և գրականության մասնագետներ չլինելը, որի մասին ընդգծեցին հենց իրենք՝ մասնագիտությամբ իրավաբան Սուրեն Վարդանյանը և իսպաներեն լեզվի և գրականության մասնագետ Աննա Մանուսարյանը, որոնք նշեցին, որ ցանկություն ունեն ծանոթանալու հայոց լեզվի և գրականության դասավանդման ժամանակակից մեթոդներին ու տեխնոլոգիաներին՝ իրենց աշխատանքն ավելի արդյունավետ կազմակերպելու համար:

Բանասիրական ֆակուլտետի դեկանի՝ ուսումնական հարցերով տեղակալ, բ.գ.թ., դոցենտ Նաիրա Խաչատրյանը, կարևորելով այս ձևաչափով հանդիպումների շարունակականությունը, ներկայացրեց նաև բանասիրական ֆակուլտետի մագիստրոսական ծրագրերը, ինչպես նաև մանկավարժական համալսարանում իրականացվող տարբեր վերապատրաստման ծրագրերը՝ կիրակնօրյա դպրոցում աշխատող մասնագետներին հորդորելով անպայմանորեն փորձել մասնակիցը լինել այդպիսի կրթական ծրագրերի:

Ֆակուլտետի դեկանի օգնական Հովհաննես Սարգսյանը, ողջունելով երկու կրթօջախների համագործակցության մեկնարկը, առաջարկեց Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի և Ամստերդամի Գրիգոր Նարեկացու անվան կիրակնօրյա դպրոցի միջև կնքել համագործակցության հուշագիր՝ ամուր հիմքերի վրա հետագա գործունեությունը շարունակելու նպատակով:

Աշխատանքային քննարկումներից հետո ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանը «Գրիգոր Նարեկացի» թեմայով կարճ, սակայն ընդգրկուն և հետաքրքիր բանախոսությամբ հանդես եկավ՝ վերջում իր պատրաստակամությունը հայտնելով՝ ժամանակ առ ժամանակ դպրոցի մասնագետներին հայրենագիտական իր գիտելիքները փոխանցելու:

Ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Աշոտ Գալստյանը, ամփոփելով հանդիպման ընթացքն ու առանձնացնելով հնչած կարևորագույն մտքերը, հույս հայտնեց, որ այսպիսի, ինչպես նաև առերես հանդիպումներն ու աշխատանքային փորձառությունների փոխանակումները շարունակական բնույթ կկրեն և շնորհակալություն հայտնեց Տեր Տարոն քահանա Թադևոսյանին՝ այս հանդիպման կազմակերպչական աշխատանքները համակարգելու և երկու կրթօջախների ներկայացուցիչների ծանոթությունը կազմակերպելու համար:

Դպրոցի տնօրեն Վահան Ավագյանն էլ տեղեկացրեց, որ հոկտեմբերին լինելու է Երևանում և անպայման այցելելու է ՀՊՄՀ՝ քննարկելու հետագա համագործակցության հարցերը:

***Հովհաննես Սարգսյան***



# ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Մանկավարժական համալսարանի մի խումբ ուսանողներ դասախոսների և ՀՊՄՀ պատմության թանգարանի տնօրեն Ալվարդ Գրիգորյանի ուղեկցությամբ այցելեցին Հայաստանի պատմության թանգարան՝ տեսնելու «Առասպելներ, պաշտամունքներ և տիեզերագիտություն» խորագրով բացառիկ ցուցադրությունը՝ բերված Բեռլինի թանգարանային կղզուց:

Ուսանողները մոտիկից ծանոթացան թանգարանում ցուցադրված հետաքրքիր և ուշագրավ նմուշներին, որոնք Հին Միջագետքից, Եգիպտոսից, Իրանից, Հունաստանից, Հայաստանից, Բյուզանդիայից, Իտալիայից, Գերմանիայից և այլ երկրներից հայտնաբերված ծիսական անոթներ էին, կնիքներ, զարդեր, զենքեր, ճարտարապետական զարդաքանդակներ և այլն:

Այս բացառիկ նմուշներում պահպանվել են հին աշխարհի տիեզերագիտական պատկերացումների, առասպելների ու հավատալիքների ուշագրավ հետքերը: Ցուցադրված նմուշների մեծ մասը վաղ երկաթի դարաշրջանին էին պատկանում՝ Ք.ա. 12-11-րդ դարերով թվագրվող «արեգակնային համակարգության» բրոնզե մոդելները, որոնց բեռլինյան օրինակներն առաջին անգամ են ներկայացվում աշխարհում:

Բեռլինից բերված ցուցանմուշների կողքին ներկայացված էր Հայաստանի պատմության թանգարանի ոչ պակաս ուշագրավ ցուցանմուշներ՝ սաղավարտ՝ Սարդուրի Բ արքայի արձանագրությամբ (Կարմիր բլուր, 764-735), բրոնզե պատկերազարդ գոտի (Ք.Ա. 12-11-րդ դդ., Սանահին), բրոնզե







ակավառակաձև թիթեղներ (Քաջարան, Ք.Ա. 12-11-րդ դդ., Զոլաքար Ք.Ա.12-11-րդ դդ.), բրոնզե արձանադրոշ՝ որսի տեսարանով, Ք.Ա. 15-14-րդ դդ., Լճաշեն), բրոնզե շքասեղներ (Սպանդարյան Ք.Ա. 12-11-րդ դդ.) և այլն:

Ցուցադրությունն առաջին անգամ մեկ հարթակում համախմբել էր Բեռլինի Թանգարանային կղզու 6 թանգարանների և Հայաստանի պատմության թանգարանի ընտրված հավաքածուները՝ տարբեր դարաշրջանների ու մշակույթների միջոցով բացահայտելով ոչ միայն նոր պատկերներ, այլև նոր գաղափարներ:

Ուսանողները նաև շրջայց կատարեցին Անիին նվիրված ցուցասրահում, պատմական հետաքրքիր ցուցանմուշների միջոցով ծանոթացան մեր պատմության կորուսյալ էջերից մեկի պատմամշակութային արժեքներին:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ



«Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնի ղեկավար, հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Քնարիկ Աբրահամյանը Վրաստանի Հանրապետությունում մասնացկել է գիտաժողովների: Սեպտեմբերի 23-25-ը Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլիի անվան պետական համալսարանում 18-րդ միջազգային սիմպոզիումին, որը կրում էր «Պատերազմի և խաղաղության թեման ժամանակակից համաշխարհային գրականության և արվեստի մեջ» խորագիրը, Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի գիտական աշխատող, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանի հետ համահեղինակությամբ ներկայացրել է «Ժամանակի և պատմության ընկալումը Զարեհ Խրախունու պոեզիայում» զեկուցումը: Գիտաժողովին մասնակցել է 10 երկրից շուրջ 4 տասնյակ հետազոտող:

Իսկ սեպտեմբերի 29-30-ը Բաթումի Շոթա Ռուսթավելու անվան պետական համալսարանում «Սև ծովը իբրև գրական և մշակութային տարածք (4) և անդին. թարգմանության և գրականության փոխադարձ անդրադարձներ» միջազգային գիտաժողովին ներկայացրել է «Վրացական գրականության հայերեն թարգմանություններ (2020–2026 թթ). նախապատվություններ և շարժառիթներ» զեկուցումը (համահեղինակ՝ «Ակսել Բակունց» գիտամշակութային հիմնադրամի տնօրեն, դոցենտ Թեհմինա Մարության):

Ավանդաբար կազմակերպվող գիտաժողովը, որին մասնակցում էր 14 երկրի 43 հետազոտող, Սևծովյան տարածաշրջանը այս անգամ դիտարկել է որպես բազմալեզու, բազմամշակույթ և դինամիկ տարածք, որտեղ գրականությունն ու թարգմանությունը փոխազդում են տարբեր մշակութային, պատմական և գաղափարական համատեքստերի հետ:

Քնարիկ Աբրահամյանը Թբիլիսում այցելել է նաև հայկական հաստատություններ, այդ թվում՝ «Հովհաննես Թումանյանի տուն» գիտական և մշակութային կենտրոն, Խոջիվանքի պանթեոն և Սուրբ Աստվածածին եկեղեցի:

## «ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒՄ



«Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի գիտական աշխատող, Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Նելլի Թադևոսյանը հոկտեմբերի 8-9-ը Հայաստանի Ազգային գրադարանում մասնակցեց «Ժառանգության պահպանություն՝ հանուն կայուն ապագայի» խորագրով միջազգային գիտաժողովին՝ նվիրված հայերեն առաջին տպագիր Աստվածաշնչի (Ոսկանյան Աստվածաշունչ) 360-ամյակին: «Սփյուռքի ժառանգության պահպանություն և հանրահռչակում» խորագիրը կրող ենթաբաժնում նա զեկուցեց «Վազգեն Շուշանյանի գրական ժառանգությունը սփյուռքահայ մամուլի էջերում» թեմայով:

Երկօրյա միջազգային գիտաժողովին մասնակցում էին աշխարհի 23 երկրներից ավելի քան 110 հետազոտողներ:



## ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ

2026 թվականի հոկտեմբերի 8-ին և 9-ին Հայաստանի Ազգային գրադարանում անցկացվեց «Ժառանգության պաշտպանություն հանուն կայուն ապագայի» խորագրով երրորդ միջազգային գիտաժողովը: Գիտաժողովը նվիրված էր 1666 թվականին Ամստերդամում առաջին անգամ հայերեն լեզվով Ոսկան եպիսկոպոս Երևանցու տպագրած Աստվածաշնչի հրատարակության 360-ամյակին:

Ոսկան Երևանցու ջանքերով Աստվածաշնչի սույն տպագրությունը նոր տեխնոլոգիա էր, որը հնարավորություն տվեց պահպանել ու հինգ հազար տպաքանակով տարածել գրքի օրինակները աշխարհի հայաբնակ վայրերում, դրանով ամրապնդելով լեզվի, հավատի գործոնը և հայկական մշակութային ինքնությունը:

Գիտաժողովին մասնակցում էին հարյուրից ավելի գիտնականներ, որոնցից 23-ը տարբեր երկրներից:

Գիտաժողովին մասնակցեցին ՀՊՄՀ գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցը և համալսարանի Հայոց պատմության ամբիոնի հայցորդ, Աստղաձորի միջնակարգ դպրոցի պատմության ուսուցիչ Տիրուհի Սիրեկանյանը: Նրանք ներկայացրին «Ոսկանյան «Աստվածաշունչ» գրքի տառակազմը» զեկուցումը:

# «Թումանյանական օրեր»-ի տաք ու արևոտ գույները



Աննկարագրելի գեղեցկությամբ Լոռվա Դսեղ գյուղում ենք՝ Ամենայն հայոց բանաստեղծի ծննդավայրում: Միջավայրը ավելի քան ջերմ ու առինքնող էր. դժվար էր առանց հուզմունքի շրջել տուն-թանգարանում, ձեռքը դնել բանաստեղծի սիրտն ամփոփող պանթեոնի քարին, հիանալ գյուղամեջի անցուդարձը, երբեմն էլ անդորրը հսկող Թումանյանի վեհ կերտվածքով արձանով, տուն-թանգարանի բակում տեղադրված քանդակներով՝ կերտված ալավերդցի քանդակի պատվարժան վարպետ, նկարիչ Ռաֆայել Ջավախյանի ձեռամբ:

Դսեղ գյուղում հերթական անգամ «Թումանյանական օրեր» տոնակատարությունն էր՝ այս անգամ արդեն նվիրված այդ ավանդույթի ակունքներում կանգնած, ՀՊՄՀ լրագրության ամբիոնի պրոֆեսոր, անվանի լրագրող, գիտնական, հետազոտող, խմբագիր, մի քանի տասնյակ գրքերի հեղինակ, «Լոռված ձոր» հայրենակցական միության երկարամյա նախագահ վաղամեռիկ Սերգո Երիցյանի 70-ամյակին: Մեծ է նրա գործունեությունն ու ավանդը թումանյանագիտության և Ամենայն հայոց մեծ բանաստեղծի անունն ու գործը հանրահռչակելու գործում, ինչի վկայություններից մեկն էլ տուն-թանգարանի բակում նրա գրքերի ցուցադրությունն էր: Ահա թումանյանական աշխարհից էլ տրվեց անվանի լրագրողի ու գիտնականի հոբելյանին նվիրված միջոցառումների մեկնարկը:

Մտավորականների մեծ բազմություն կար թումանյանական հայրենի տան բակում՝ ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչներ ու երգիչ կատարողներ, Սերգո Երիցյանի ուսանողներ ու գործընկերներ, հարազատներ, գյուղի դպրոցի ուսուցիչներ ու սովորողներ, Ալավերդու ժողովրդական թատրոնի դերասաններ...

Գյուղական կոլորիտն անզուգական էր՝ տաք ու արևոտ օրը ժպիտներ էր պարգևում բոլորին՝ «Արևի նման նայեցեք աշխարհիս» թումանյանական խոսքին կենդանություն տալով, իսկ շրջապատող բնությունը կարծես նորովի էր բացահայտում բանաստեղծի պոեզիայի ներշնչման իրական ու անիրական գեղեցկությունը:

Օրը թումանյանական էր ու Թումանյանով լեցուն, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, հանդիսավար Սարգիս Նաջարյանի ձայնն էլ օրվա հանդիսավորությանը թումանյանական մի առանձին մեղմություն ու ներքին հմայք էր հաղորդում:

Տոնական մուտքը Ալավերդի քաղաքի ժողովրդական թատրոնի դերասաններին էր վերապահված՝ «Սուտլիկ որսկան»-ի հրաշալի մատուցմամբ:

Ներկաները մեծ ջերմությամբ ու սիրով ունկնդրեցին ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Ստեփան Դալլաքյանի, Ռուբեն Սահակյանի (Սարոյի մեներգը) և Արմենուհի Սեյրանյանի (Անուշի մեներգը), ասմունքող Ջիվան Սարգսյանի կատարումները: Թումանյանի ստեղծագործությունների երաժշտական կատարումներով հանդես եկան երիտասարդ երգիչներ Արսեն Զաքարյանը, Արման Գրիգորյանը և ուրիշներ:

ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Արմեն Ամիրյանի, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կառլեն Մատինյանի, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ՀՊՄՀ դոցենտ Հովհաննես Հովհաննիսյանի, «Լոռվա ձոր» հայրենակցական միության նախագահ, Երևանի № 135 դպրոցի տնօրեն Գարեգին Ներսեսյանի ելույթները Թումանյան բանաստեղծի ու նրա ծննդավարում բազմաթիվ գեղեցիկ ու մնայուն նախաձեռնությունների հեղինակ Սերգո Երիցյանի հիշատակի ոգեկոչման աննկարագրելի պահերով էին լեցուն:

«Փառահեղ օր է այսօր, և երանի թումանյանական այս հսկայական տիեզերական ժառանգության ինչ-որ մի մասնիկը զետեղվեր յուրաքանչյուր հայի սրտում և հոգում. այդ պարագայում, ես կարծում եմ, մեր հայրենիքը և մեր ժողովուրդը շատ ավելի բարեկեցիկ, բարի և արժանապատիվ կյանքով կապրեին»,-ասաց Արմեն Ամիրյանը՝ ընդգծելով, որ հրաշալի է, որ այն նշանավորվում է նաև լրագրող, հասարակական, քաղաքական գործիչ, արժանապատիվ մարդ, լավ ընկեր Սերգո Երիցյանի հոբելյանական միջոցառումների մեկնարկով:

«Այսօր մեզ այստեղ միավորողը Թումանյանի ոգին է՝ թումանյանական արժեհամակարգով, և այդ արժեհամակարգին անմնացորդ նվիրված Սերգո Երիցյանի հիշատակը մեծարելու ցանկությունը»,-ասաց Երիցյանի երկարամյա գործընկեր, ՀՊՄՀ դոցենտ Հովհաննես Հովհաննիսյանը»:

Տուն-թանգարանի տնօրեն Ռոզա Ղազումյանն էլ հիշեց Սերգո Երիցյանի լավագույն նախաձեռնություններից մեկը, երբ այստեղ՝ ծննդավայրում, հավաքում էր բանաստեղծի աշխարհասփյուռ շառավիղներին՝ թոռնուհու՝ Իրմա Սաֆրազբեկյանի գլխավորությամբ, որն այս օրերին բոլորեց իր կյանքի 93-ամյակը: Ամեն տարի նրանք տուն-թանգարանին մի առանձնահատուկ նվեր են ուղարկում, այս անգամ ուղարկել էին Հովհաննես Թումանյանի ակնոցը:

«Լոռվա ձոր» հայրենակցական միության նախագահ Գարեգին Ներսեսյանը թանգարանին նվիրեց դպրոցի ուսուցիչ Էդուարդ Տեր-Սահակյանի և ովորողների կողմից պատրաստված թումանյանական գեղեցիկ կոլաժ:

Դսեղի հիմնական դպրոցի փոքրիկների ելույթով՝ թումանյանական հայտնի երգի կատարումով ամփոփվեց «Թումանյանական օրեր» միջոցառումը, որը մեծ բանաստեղծի կյանքի ու գործունեության հուշից գեղեցիկ պատառիկներ պարգևեց ներկաներին:

***Սիլվա Ասրյան***

## «Լավագույնների հետ՝ դեպի նոր բացահայտումներ



Որպես ՀՊՄՀ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի լավագույն ուսանող՝ մեծ ուրախությամբ մասնակցեցի «Լավագույն ուսանող» ամենամյա մրցույթի հաղթողների համար կազմակերպված եռօրյա ճանաչողական այցին դեպի Վրաստան: Ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանի գլխավորությամբ իրականացված այս ուղևորությունն ինձ համար դարձավ ոչ միայն ճանաչողական, այլև ջերմ ու ոգեշնչող փորձառություն: Թբիլիսիի տեսարժան վայրերին ծանոթանալը, քաղաքի պատմամշակութային միջավայրն ուսումնասիրելն ու հարևան երկրի ավանդույթներին հաղորդակից լինելը հնարավորություն տվեցին Վրաստանը բացահայտել նոր տեսանկյունից:

Որպես աշխարհագրագետ՝ հատկապես հետաքրքիր էր անմիջականորեն ճանաչել քաղաքի առանձնահատկությունները, զգալ նրա պատմական շունչն ու տեսնել, թե ինչպես են անցյալն ու ներկան միահյուսվում քաղաքային միջավայրում: Այս երեք օրերն անցան ջերմ մթնոլորտում՝ լի անկեղծ շփումներով, հետաքրքիր զրույցներով և միասին կիսած դրական հույզերով: Ինձ համար առանձնահատուկ էր տարբեր ֆակուլտետների լավագույն ուսանողների հետ ժամանակ անցկացնելու, նոր ծանոթություններ հաստատելու և համատեղ հիշողություններ ստեղծելու հնարավորությունը: Վերադարձա նոր տպավորություններով, գիտելիքներով ու գեղեցիկ հիշողություններով:

Այս այցն ինձ համար ևս մեկ անգամ ընդգծեց, որ ուսանողական տարիների արժեքավոր պահերը միայն ակադեմիական հաջողությունները չեն, այլև այն փորձառությունները, որոնք ընդլայնում են մեր աշխարհայացքը, միավորում մարդկանց և ոգեշնչում շարունակելու ինքնազարգացման ճանապարհը: Շնորհակալ եմ ՀՊՄՀ-ին և Ուսանողական խորհրդին՝ այս գեղեցիկ հնարավորության ու անմոռանալի օրերի համար:

***Աստղիկ Հարությունյան***
***Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրս***

## ՀՊՄՀ տարբեր ֆակուլտետների 1-ին կուրսեցիների ճանաչողական այցը համալսարանի պատմության թանգարան և գրադարան







Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝
www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Լուսինե ԼԱԼԱՅԱՆԻ